

---

Հայ ժողովրդական հեքիաթներ, հ. XVII, Մոկս, կազմեց, առաջաբանը գրեց և ծանոթագրեց Թ. Լ. Հայրապետյան: Խմբ.՝ Ա. Ս. Ղազիյան, Երևան, «Գիտություն» հրատ., 2012, 840 էջ:

ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի բանահյուսական տեքստաբանության բաժնի մի խումբ աշխատակիցների տարիների տքնաջան, մանրակրկիտ աշխատանքներից հետո «Գիտություն» հրատարակչությունը լույս է ընծայել «Հայ ժողովրդական հեքիաթներ» հերթական XVII հատորը, որտեղ ընդգրկված են պատմական Հայաստանի Մոկս գավառի հեքիաթները:

Հատորը կազմել, առաջաբանն ու ծանոթագրությունները պատրաստել է ավագ գիտաշխատող, բանասիրական գիտությունների թեկնածու Թամար Հայրապետյանը: Հատորի խմբագիրն է բանագետ Ա. Ղազիյանը:

Մոկսը կամ Մոկքը գտնվում է Արևմտյան Հայաստանում, Վանա լճի հարավային կողմում, հյուսիսից և արևմուտքից սահմանակից է Վասպուրականին, հարավից՝ Կորճալքին, արևմուտքից՝ Աղձնիքին: Դեռևս մ. թ. ա. IX–VI դդ. Մոկսի տարածքն ընդգրկված է եղել Ուրարտական պետության կազմում, ապա մաս կազմել Երվանդունիների հայկական թագավորության: Իր աշխարհագրական դիրքի շնորհիվ Մոկսը մշտապես պատմական կարևոր դեր է խաղացել հայ ժողովրդի կյանքում: Ազատատենչ, քաջարի բնակիչների և բարձրաբերձ, անմատչելի լեռնային դիրքի շնորհիվ պատմական բոլոր ժամանակաշրջաններում Մոկսի որոշ բնակավայրերում հայ իշխանները շարունակում էին պահպանել իրենց կիսաանկախ գոյությունը:

Մոկսը Վանի վիլայեթի գավառներից է, բարբառը պատկանում է «կ»-ը ճյուղին, Վանի բարբառի խոսվածքներից մեկն է: Անտրիկ դիրքի շնորհիվ Մոկսը աշխարհն ապրել է իր ուրույն, փոքր-ինչ առանձնացված, ներփակ կյանքով ու ձևավորել լեզվական յուրահատուկ միջավայր և իր

հնությունից եկող մշակութային ավանդույթներ: Մոկսը հայտնի է բանարվեստի հնամյա ավանդներով, պատմելու առանձնակի տաղանդով օժտված ասացողներով:

Մոկսը աշխարհն իր մշակութային ինքնատիպ իրողություններով՝ պատմական հուշարձանների ճարտարապետությամբ, դրանց վրա եղած հարուստ վիմագրերով, բարբառային յուրահատկություններով, նիստ ու կացով, սովորույթներով, բանահյուսական հարուստ ժառանգությամբ հասանելի չի եղել և գրեթե անձանտթ էր ազգային արժեքներով հետաքրքրված հայ մտավորական շրջանակներին: Եվ պատահական չէ, որ այն գրավեց տակավին երիտասարդ, բայց արդեն արևելագիտության ասպարեզում խորամուխ այնպիսի մի հեռանկարային գիտնականի ուշադրությունը, ինչպիսին Հովսեփ Օրբելին էր: Ակադեմիկոս Մառի հանձնարարությամբ նա մեկնեց Արևմտյան Հայաստան, ուսումնասիրելու Վանի վիլայեթի բարբառներից մեկը: Եվ հատկապես Մոկսը բարբառն էր, որ հետաքրքրեց նրան, ու 1911 և 1912 թթ. իր գիտարշավի շուրջ երեքնկես ամիսների ընթացքում նա ոչ միայն բարբառագիտական ուսումնասիրություն կատարեց, այլև ընդլայնեց հետազոտությունների ոլորտը՝ ներկայացնելով Մոկսը աշխարհի մշակութային համալիրը՝ հնավայրերը, ճարտարապետական արժեք ներկայացնող շինություններն իրենց վիմագիր արձանագրություններով ու խաչքարերով, բնակավայրերը, դրանց տեղագրությունը, բնակչության կազմն ու թվաքանակը, մարդկանց զբաղմունքը, կենցաղը, նիստն ու կացը, սովորույթները, ժամանցի ձևերը: Օրբելու նման խորագետ հետազոտողը չէր կարող անուշադրության մատնել տեղի ժողովրդի բանավոր ստեղծագործությունը: Տեխնիկայի բացակայության պայմաններում նա գրի

առավ զգալի թիվ կազմող առակներ ու զվարճախոսություններ, հեքիաթներ, հարսանեկան ու աշխատանքային երգեր, վիպերգեր:

Մոկացիներից գրառված ու պահպանված նյութերը թեև եղածի չնչին մասն են, սակայն աչքի են ընկնում բարձր արվեստով և բովանդակային հարստությամբ: Մոկացի ասացողներից են գրի առնվել «Մասնա ծեր» հերոսավեպի զգալի թիվ կազմող պատումներ: Մոկացի շինականներն ընդհուպ մինչև իրենց պատմական հայրենիքի կորուստը շարունակել են երգել «Մոկաց Միրզա», «Ասլան աղա», «Կարոս խաչ», «Նարեկացին», «Ալեքսիանոս» վիպերգերը: Մոկաց աշխարհի ծնունդ են հայտնի «Մոկաց հարսներ» երգը, բնությանն ու իրենց հերոսներին գովերգող քնարական երգեր, հարսանեկան և այլ ծիսերգեր:

Մոկաց աշխարհի հեքիաթների առաջին գրառողը եղել է Ս. Հայկունին, որը 1901-1902 թթ. «Էմինյան ազգագրական ժողովածուի» Բ և Դ հատորներում հրատարակել է ութ հեքիաթ, որոնցից վեցի պատմողը Ջատիկ Խեպոյանն է: Յավոք, Հայկունին գրառման վայրի մասին տեղեկություններ չի թողել, սակայն այն փաստը, որ այդ ասացողը «Մասնա ծերի» մի հայտնի պատումի վիպասաց նույն Խեպոյանն է, մեզ հուշում է, որ գրառումը պետք է կատարված լինի Էջմիածնում, ուր վերջինս 1898-ից ի վեր տեղափոխվել էր և սպասավորի պաշտոն էր վարում Գևորգյան ճեմարանում:

1910 և 1911 թթ. Ե. Լալայանը Արևմտյան Հայաստան կատարած ճամփորդությունների ժամանակ եղել է նաև Մոկսում և Արտ. Շահինյանի հետ գրառել 15 հեքիաթ, որոնք պահպանվում են ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի բանահյուսական արխիվում: Դրանցից վեցը պատմել է «Մասնա ծերի» հայտնի վիպասաց Վարդան Մուխսի-Բազիկյանը:

Մոկաց հեքիաթներ, նաև ժողովրդական այլ ստեղծագործություններ վերջին անգամ հավաքել են 1915-1916 թթ. Ե. Լալայանի արշավախմբի անդամները. նրանք ե-

ղենից բնագաղթված և Արևելահայաստանում ապաստանած մոկացիներից գրի առան վեց տասնյակից ավելի հեքիաթներ:

Մոկաց հեքիաթների ներկա հատորը կազմելիս Ե. Լալայանի արխիվային ֆոնդից ընդգրկվել են բանարվեստի տեսանկյունից առավել կատարյալ ու ավարտուն 70 անտիպ հեքիաթներ, որոնք աչքի են ընկնում իրենց բնաշխարհին յուրահատուկ վառ պատմելառճով, արխայիկ մտածողությամբ: Բացի այդ՝ Մոկաց գավառի հեքիաթների հարստությունն ու դիպաշարային բազմազանությունն առավել ամբողջությամբ ներկայացնելու համար ընդգրկվել են նաև «Էմինյան ազգագրական ժողովածուի» և Օրբելու՝ Մոկսին նվիրված ուսումնասիրության (Մ. Օրբելու, Избранные труды, т. 2, Ереван, 2002) մեջ գետեղվածները՝ ընդհանուր թվով 14 տպագիր նմուշներ:

Հատորը շարունակում է բարբառային լեզվական առանձնահատկությունները հնարավորինս ճշգրիտ ներկայացնելու նույն տեքստաբանական սկզբունքները, ինչ արվում էր նախորդ հատորներում: Բացառվում է կազմողի կողմից բարբառային արտահայտությունների կամ բովանդակային որևէ խմբագրում: Այնուհանդերձ, Մոկսի խոսվածքի ձևաբանական ու արտասանական առանձնահատկություններն ամբողջությամբ ներկայացնելու համար մեկ հեքիաթ տրված է գիտական ճշգրիտ տառադարձությամբ («Հավելված I»):

Հատորն ունի նախաբան, որը բովանդակալից ներկայացնում է Մոկաց ազգագրական շրջանի յուրահատկությունները, տալիս նյութի ու հատորի կազմման նախապատմությունը, ինչպես նաև գիտական հրատարակությանը պատշաճող ծանոթագրություններ:

Բացի բնագրային ճշգրտությունը ապահովելու բարդ ու մանրակրկիտ աշխատանքներից՝ հատորը կազմելիս հաշվի է առնվել Մոկաց բարբառի առանձնակի խրթինությունը, առավելագույնս մանրամասնորեն է կազմվել բարբառային բառերի բառարանն ու առարկայական ցանկերը, որոնց կազմման աշխատանքներին մասնակցել են բաժնի աշխատակիցներ Լ. Մկրտումյանը և Ք. Այվազյանը:

Յուրաքանչյուր բանահավաքի անվան էտևում կա մի ամբողջ մարդկային կյանք՝ անսահման նվիրում, գրկանքներ, դժվարություններ և տքնաջան աշխատանք: Այդ ամենի մասին ընթերցողին նվազագույն պատկերացում տալու, ինչպես նաև մեր երախտավորների հիշատակը պահպանելու միտումով «Հավելված II»-ում ներկայացված են բանահավաքներ Սենեքերիմ Շալճյանի և Արտաշես Բարսեղյանի կենսագրությունները:

Հատորը հարուստ է նաև զանազան ցանկերով: Աղյուսակի ձևով տրված է հեքիաթների ցանկն ըստ ծագման վայրի, բանասացի և գրառողի: Հատուկ անունների ցանկերում առանձնացված են անձնանուններն ու տեղանունները: Առարկայական ցանկը կազմված է մանրամասնորեն, ամենայն բարեխղճությամբ:

Կատարման մակարդակով ներկա հատորը նոր որակ է հայ ժողովրդական հեքիաթների հրատարակության ասպարեզում:

ԵՎԱ ԶԱՔԱՐՅԱՆ